ՀԱՐՑԱՐԱՆ՝ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻՆ

1. Նախ՝ ընդունեք մեր շնորհավորանքները: Ապա՝ այսպիսի մի հարց. ի՞նչ է 90-ը Սարինյանի համար: Եվ, առհասարակ, Դուք ինչ զգացողություն եք ունենում հավերժության հետ Ձեր հարաբերություններում:

Ս. Ս. – Հարցադրումն այնքան օտար է իմ ներզգացողություններին, որ գրեթե պատասխան չունի: Ինձ համար փիլիսոփայականը ոչինչ է և ոչ հավերժականը: Հրանտ Մաթևոսյանին հարցրել եմ՝ երբևէ մտածե՞լ է ինքնասպանության մասին: «Ինձ որտեղի՞ց այդքան քաջություն», պատասխանել է նա: Միայն նա կարող էր այդպես պատասխանել: Ես պարզապես անընդմեջ կրկնել եմ նույն պատասխանը: Այդ է թելադրում իմ այս վիճակը: Եթե... Եթե չլիներ իմ ամենամտերիմ էակի խորհուրդը՝ «Մարդիկ կամ ապրում են, կամ չեն ապրում: Եթե նույնիսկ ապրում են ակամա, ապա պիտի կրեն տառապանքը, չէ՞ որ փիլիսոփայի բնորոշմամբ ապրել նշանակում է տառապել. «Աշխատել և տառապել ապրելու համար, ապրել աշխատելու և տառապելու համար» (Շոպենհաուեր):

2. Անշուշտ, կան Ձեր ժամանակի մեջ եզակի պահեր, որոնք կարող եք առանձնացնել:

Ս. Ս. – Միայն բանականությամբ եմ գիտակցում իմ կենսագրության ժամանակի անցումները, որի երկարատև ընթացքի վրա չեմ նշմարում ոչ մի «եզակի պահ»: Մշտապես ինձ գտել եմ վերևներում, որի բարձունքից ամեն ինչ թվացել է սովորական և նույնիսկ անհետաքրքիր: Իմ կյանքի «եզակի պահը» ներկա վիճակս է և այն, ինչ կռահեց գուշակը պատանեկությանս տարիներին՝ թե մասնակցելու եմ պատերազմին, վերադառնալու եմ անփորձ, բայց կյանքում լինելու եմ դժբախտ: Գուշակությո՞ւն էր սա, թե՞ ճակատագիր:

3. Պարոն Սարինյան, Ձեր «Հայոց գրականության երկու դարը» բազմահատոր աշխատությունը ոչ միայն սեղանի գիրք է դարձել, այլև մրցում է Ձեր իսկ ստեղծած «Հայ նոր գրականութ-

յան պատմություն» հնգհատորյակի հետ, բուհական աշխարհում: Գրելու ժամանակ Դուք զգու՞մ էիք, որ դասագրքային արժեքներ եք ստեղծում:

Ս. Ս. – Խոսքս սկսեցի հոռետեսությամբ, բայց դա վիճակի ողբերգական արձագանք չէ, այլ կեցություն, բնույթ, հոգեկան կերտվածք, այսինքն վերջավորություն չէ, այլ ընթացք, որ բնավ չի կաշկանդել ստեղծագործական մղումները, այլ տվել է ներքին դրդումներ որոնելու անհայտը, էութենականը: «Հայ նոր գրականության պատմություն» կոլեկտիվ աշխատությունը, իրավամբ գրականագիտական բացառիկ ուսումնասիրություն է, կարելի է ասել չգերազանցված, որի գիտական արժեքն ամենից առաջ խորապես ստույգ համակարգությունն է:

Ինչ վերաբերում է «Հայոց գրականության երկու դարը» հինգհատորանոց իմ աշխատությանը (վեցերորդ հատորը տպագրության ընթացքի մեջ է) ապա ամբողջության մեջ այն կարող է ընկալվել որպես հայոց գրականության նոր շրջանի պատմության դրվագներ: Ուսումնասիրությունները գերազանցապես տեսություններ են (обозрение), որոնք լուսաբանում են երևույթը պատմական ուրվագծի մեջ: Այսպես հատորների մեջ ներկայացվում են նոր շրջանի հայոց գրականության բոլոր հանգուցային հարցերը:

4. Որպես «Հայկական ռոմանտիզմ» մենագրության հեղինակ, ինչպե՞ս եք այսօր տեսնում գրական ուղղությունների զարգացումը հայ գրականության մեջ:

Ս. Ս. – Վարժապետական պատկերացմամբ գրականության դասական ուղղություններին՝ կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, վիճակված է մի որոշ պատմաշրջան, որից հետո նրանք կորցնում են իրենց գեղագիտական արժեքը: Այստեղ ճշմարտությունը կարող է վերագրվել պատմության և փիլիսոփայական աշխարհայեցության սահմանումներին, բայց խոսքի գեղագիտական-գեղարվեստական առնչությամբ դասական ուղղություններից յուրաքանչյուրը իր հարատև արժեքն է ներդնում գեղարվեստական զարգացման ընթացքի վրա: Այս երևույթը խորապես գիտակցում էր Վարուժանը, իր ստեղծագործության պոետիկայում համատեղելու կլասիցիզմի, ռոմանտիզմի և ռեալիզմի ոճական առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, արդի հայոց բանաստեղծության ականավոր դեմքերից Հակոբ Մովսեսի պոեզիայի գեղարվեստական բարձր արժեքը ես բացատրում եմ կլասիցիզմի, ռոմանտիզմի և մոդեռնիզմի ոճական համադրությամբ: Ինչ վերաբերում է արդի գրականության ուղղություններին, ապա, իմ համոզմամբ, գրականությունն այնքան

է անհատականացվել, որ յուրաքանչյուր գրող կամ բանաստեղծ ստեղծում է իր ուղղությունը: Հետևաբար, արդի գրական ուղղություններ հասկացությունը, ընդհանուր պատկերացմամբ այսպիսին է՝ դասական ռեալիզմի ավարտին հաջորդել է մոդեռնիզմը՝ նատուրալիզմ, սիմվոլիզմ և այլն, իսկ 20-րդ դարավերջին համաշխարհային ճանաչում է ստացել պոստմոդեռնիզմը, որի իմաստը մոդեռնիզմի բացասումն է:

5. Ի՞նչ է գրականագիտությունն ըստ Սարինյանի. գրական գիտությո՞ն, փիլիսոփայությո՞ն, արվե՞ստ, թե՞... Ինչպիսի՞ն է Ձեր մոտեցումը:

Ս. Ս. – Գրականագիտական իմ գործունեության հիմնական դրույթներից մեկը եղել է գրականագիտության մեթոդաբանության հարցը, որին ես անդրադարձել եմ բազմաթիվ անգամներ: Իմ ելակետը մշտապես եղել է ապացույցը, որ գրականագիտությունն ու քննադատությունը գիտություն են, տեսակետ, որ ոչ ակադեմիական մակարդակներում այսօր էլ վեճի առիթ է տալիս: «Один доказывает, другой показывает» - Բելինսկու այս բնորոշումը ընդհանուր առմամբ ճիշտ է արտահայտում գրականագիտության և գրականության տարբերությունը:

Սակայն գրականության գիտականացման հարցն այլ դրվածքով առաջադրեցին Նոր քննադատության տեսաբանները 20-րդ դարի 20-30-ական թվականներին: Անտեսելով գրականագիտության գիտականացման հումանիտար հիմունքը, «Նոր քննադատության» տեսաբաններն ու փիլիսոփաները տեսակետ առաջադրեցին, թե հումանիտար գիտությունները ծգնաժամի մեջ են և այն պետք է նորոգել բնական գիտությունների մեթոդաբանության սկզբունքներով: Այսպես ձևավորվեց ստրուկտուրալիզմը (կառուցվածքային գրականագիտությունը), առաջադրելով «գրականագիտությունը պետք է գիտականանա» սկզբունքը: Այս նշանակում է, որ գրական ստեղծագործությունը պետք է զտել բովանդակային տարրերից՝ սոցիալական, պատմական, կենցաղային, բարոյական, գաղափարական, փիլիսոփայական և այլն, դրանք հատկացնել համապատասխան գիտությունների իմացությանը և գրական երկը դիտել որպես հեղինակից օտարված կառուցվածք, որի ենթաբնագիրը կարելի է կռահել նշանների համակարգով:

Ասեմ, որ հենց սկզբից ես քննադատական դիրքորոշում եմ ունեցել ստրուկտուրալիզմի նկատմամբ և ընդունելով նրա վերլուծական մեթոդի դրական կողմը, գրականության գիտականացման սկզբունք եմ համարել հումանիտար հիմունքը, առաջնային համարելով կոմպլեքսային (համադրական) վերլուծության սկզբունքը՝ գրական երկի բովանդակային և ձևաբանական հատկանիշների միասնությամբ:

Ինչ վերաբերում է գրականագիտության բնույթին հումանիտար գիտությունների շարքում, ապա իմ պատկերացմամբ գրականագիտությունը փիլիսոփայական գիտություն է և կարելի է ասել, որ ես արդի գրականագիտության մեջ ուղղություն եմ տվել փիլիսոփայական գրականագիտությանը և մեթոդաբանական մեկնաբանություն եմ տվել «ինչ է գրականության փիլիսոփայությունը» հասկացությանը:

6. Ձեզ իրավացիորեն համարում են հայ գրականության օրենսդիր-գիտնական: Ժամանակակից գրականության զարգացման խնդիրներին Դուք հաճախ եք անդրադառնում... Ի՞նչ ձեռքբերումներ ու նորույթներ եք տեսնում այդ ասպարեզում:

Ս. Ս. – Ասեմ, որ գրականագիտական իմ գործունեությունը անբաժանելի եմ դիտում Հրանտ Թամրազյանի, Սուրեն Աղաբաբյանի, Էդվարդ Ջրբաշյանի գիտական գործունեությունից և այս իմաստով «գրականության օրենսդիր» բնորոշումը հավասարապես վերագրում եմ նաև նրանց: Իսկ ավելի լավ է հարցի պատասխանը վերապահենք ակադեմիկոս Արամ Ղանալանյանին. «Ինչպես բժշկության, այնպես էլ գրականագիտության համար առաջնահերթ և վճռական դեր ունի տվյալ հիվանդության կամ գրական երևույթի բացահայտումը, նրա, այսպես ասած, դիագնոզը... Ճիշտ տրված դիագնոզը բժշկության մեջ իրական պայմաններ է ստեղծում տվյալ հիվանդությունը բուժելու համար: Նույն տիպի դիագնոզը գրականության մեջ առարկայական հիմք է հանդիսանում տվյալ գրական երևույթի՝ հասարակական մտքի և գրական շարժման մեջ խաղացած դերի գիտական գնահատության համար:

Դիագնոզ դնելու այդպիսի բնատուր ձիրքով օժտված գրականագետքննադատ է Ս. Սարինյանը: Իրեն հատուկ խորաթափանց մտքի լուսարձակով նա կարողանում է լուսավորել գրական երևույթների բնորոշ առանձնահատկությունները, կատարել տեսական հիմնավոր ընդհանրացումներ, տալ պատմա-սոցիոլոգիական և գեղագիտական ճշմարտացի գնահատականներ...

Հարցի երկրորդ մասի վերաբերյալ դժվարանում եմ լիարժեք պատասխան տալ: Այնքան ակնհայտ է գրական ընթացի ընդհատումը Լևոն Խեչոյանից հետո, որ ուղղակի անհնարին է միացնել եզրերը: Երբ ակնարկում ենք գրականության ճգնաժամի մասին, ապա այն չպետք է հասկանալ ժխտելու իմաստով: Խոսքը վերաբերում է շարունակող նոր սերնդին, որտեղ Հուսիկ Արայից, Միեր Բեյլերյանից և Հրաչյա Սարիբեկյանից հետո նոր ձևավորվող անհատականություն դժվար է նշմարել: Իսկ գրականությունը կա Ռուբեն Հովսեփյանի դասական արձակով, Գուրգեն Խանջյանի, Արմեն Շեկոյանի, Լևոն Ջավախյանի, Մաքսիմ Հով-

հաննիսյանի, Վահագն Գրիգորյանի ստեղծումներով, պոեզիան՝ Ռազմիկ Դավոյանի, Դավիթ Հովհաննեսի, Հակոբ Մովսեսի, Վարդան Հակոբյանի, Հրաչյա Սարուխանի դասական դարձած անուններով:

7. Դուք այն եզակի գրականագետներից եք, ով մշտապես անդրադառնում է դասական արժեքների վերագնահատմանը և ժամանակակից գրականության զարգացման միտումներին: Նորի ու հնի պայքարում ի՞նչն եք համարում առաջնային:

Ս. Ս. – Արդի գրականության մեջ հնի և նորի պայքարը բացառվում է, քանզի նման պայքարի համար չկա ոչ սոցիալական և ոչ էլ գաղափարական հիմք: Անցումը կլասիցիզմից ռոմանտիզմին և ռոմանտիզմից ռեալիզմին ուղեկցվել է որոշակի պայքարով, որի համար առկա էին սոցիալական ու գաղափարական գործոններ: Արդի ապասոցիալականացված հասարակությունը ազատ է նման պայքարի անհրաժեշտությունից: Ես հարցն ընկալում եմ տեսականորեն և ոչ թե սոցռեալիզմի անցողիկ երևույթի դեմ պայքարի անհրաժեշտությամբ: Խնդիրը 21-րդ դարի գրականության ոճի յուրացումն է, որպիսին ես նշմարում եմ Լևոն Ջավախյանի արձակում: Ակնհայտ է ոչ միայն սյուժեների բացարձակ անձնականացումը, այլև երևույթների ընկալման ձևաբանությունը, աշխարհընկալման պոստմոդեռնիզմի հակադրականությունը մոդեռնիզմին:

8. Ժամանակակից գրական մեր ընթացի յուրաքանչյուր նոր ձայն հայ և համաշխարհային գրականության ու արվեստի ամեն մի նորույթ, որպես կանոն, մեզանում առաջինը (կամ՝ առաջիններից մեկը) Դուք եք նկատում ու արձագանքում... Դա մասնագիտական հետաքրքրասիրությո՞ւն է, սկզբո՞ւնք, թե՞ բնույթ...

Ս. Ս. – Ինչպես կուզեք. սկզբունքը և բնույթը ինքնին հենց մասնագիտական հետաքրքրության ածանցումներն են: Իմ միտքը մշտապես լարված է օրվա նորույթներին ունկնդիր լինելու բնազդով: Իմ օրն սկսվում է մամուլի հիմնական օրգաններին հաղորդակցվելու պահանջով: Ես չեմ կարող սկսել իմ օրը առանց կարդալու Արամ Աբրահամյանի առաջնորդողներն «Առավոտում», Գագիկ Մկրտչյանի խոհամիտ վերլուծականները «Հայոց աշխարհում», Օֆիցիոզի քննաբանությունը «Հայկական ժամանակում», ապա նաև «Իրավունքը», «Իրատես դե ֆակտոն», «168 ժամը» և այլն: Չխոսելով արդեն գրական մամուլի մասին, որ իմ մասնագիտական ոլորտն է: Այս ամենը թարմ են պահում իմ հիշողությունը մտավոր շարժման ընթացի վերաբերյալ:

9. Պարոն Սարինյան, անկասկած Դուք ֆենոմենալ անհատականություն եք՝ թե՛ մարդկային Ձեր նկարագրով, թե՛ գրականագիտության մեջ ունեցած վիթխարի ներդրումով: Ձեր ամեն մի հոդված, ամեն մի աշխատություն մեր իրականության մեջ դիտվում է որպես նորարարական խոսք՝ գիտական խորը վերլուծություններով, տիեզերական ընդգրկումներով: Ի՞նչ ակունքներից են սնվում Ձեր բացառիկ կենսունակության ու իմաստասիրության արմատները:

Ս. Ս. – Պատասխանը մասամբ տրված է նախորդ հարցով: Իմ հոգեկան ու մտածական հակումների ձևավորումը մշտապես ուղղված է եղել դեպի երևույթի փիլիսոփայական իմացությունը: Փորձել եմ կռահել անհասկանալին և ինձ դուր է եկել ոչ թե հասկանալին, այլև անլուծելին: Պատկերացրեք պատանեկան հավակնոտությունը՝ 7-րդ դասարանում կարդալ Մարքսի «Կապիտալը», Հիպոլիտ Թենի «Գեղարվեստի փիլիսոփայությունը», Էռնեստ Հեկկելի «Տիեզերական առեղծվածները» և նման գրականություն: Այս հակումը որոշակի փոխաձևեց իմ մտածողությունը և բնականաբար իմաստավորեց գրականագիտական իմ գործունեությունը: Ժամանակին ես պարբերաբար ստանում էի «Иностранная литература», «Вопросы философии», «Вопросы истории», «Теория литературы» և այլ ռուսերեն թերթեր ու ամսագրեր, որոնք լայն ինֆորմացիա էին տալիս գիտության ու գրականության համաշխարհային տեղաշարժերի վերաբերյալ: Դա մտավոր սնունդ էր տալիս ինձ լինելու ժամանակի հետ: Այստեղից ես ոչ միայն քաղում էի որոշ բառապաշար ու հասկացություններ, որոնք գրականագիտական միտքն արգասավորում էին բնական և այլ գիտությունների իմացական բանաձևերով: Դժբախտաբար այժմ ես չունեմ գիտական հաղորդիչների այդ ակունքը: Իմ երևույթն արդեն պատկանում է անցյալին:

10. Երբ Դուք հոգնած եք լինում կյանքի աղմուկներից, Ձեր սիրած փիլիսոփաներից ո՞վ է իր իմաստասիրությամբ այցելում Ձեզ. Նիցշե՞ն, Ծոպենհաուե՞րը, Պըլը-Պուդի՞ն, թե՞...

Ս. Ս. – Մի անգամ չէ, որ ասել եմ, որ ես բնական հոռետեսություն ունեմ: Ես չեմ ճանաչում ոչ ապագան և ոչ էլ երջանկությունը: «Գեղեցիկը կփրկի աշխարհը», «Սերը կփրկի աշխարհը» և նման բանաձևերը մտավոր անիմաստ վարժանքներ են: Միակ ճշմարիտը Աստված է: Ինչու միայն Ծոպենհաուերն ու Նիցշեն, բոլոր երևելի փիլիսոփաները եղել են հոռետեսներ: Այդ փիլիսոփայության վերջերգը եղավ 20-րդ դարի էքզիստենցիալիզմը:

Ինչ վերաբերում է Պըլը-Պուղուն, ապա իմ ընկալմամբ նա եղել է ողբերգական անհատ և իր փիլիսոփայական զվարճախոսություններով գուշակել է Ղարաբաղի մելիքությունների կործանումը:

11. Ձեր բառը, առանց չափազանցության, սխրագործություն է. ի՞նչ տեղ ունի հայրենի Արցախը Ձեր կյանքում ու գեղագիտական մտքի ձևավորման մեջ:

Ս. Ս. – Այն ամենը, ինչ իմ մեջ կա, ամբողջապես արցախյան է: Ֆիզիկական իմ կազմությունը արցախյան է և ձուլվել է արցախյան հողի, ջրի, բնության շաղախից: Արցախում է կազմավորվել իմ աշխարհայացքը, այստեղ եմ ես ճանաչել հեռավորության, երկնքի, բարձունքի, հորիզոնի, որոտի, կայծակի, գիշերների ու արշալույսների տիեզերական արժեքները: Իմ հոգեկան կերտվածքի անփոխարինելի մասունքներից են Արցախի բարբառը, բառը, արցախյան լեզվի հնչերանգը, ձայնը, տեղանունների և արցախցու մարդկային տեսակի գրավչությունը: Թող պաթետիկ չհնչի խոսքս, բայց առանց Արցախի ես չեմ պատկերացնում իմ ֆիզիկական գոյությունը:

Այժմ իմ մտածումների, մտահոգությունների, հոգեկան տագնապների առարկան Արցախն է, նրա ճակատագիրը, որի հայելում արտացոլվում է միջազգային քաղաքականության քառադեմ այլանդակությունը: Տարածքային ամբողջականության ստատուսը գաղութատիրական բռնության մնացուկն է, որից չեն կարողանում ազատագրվել մեծ տերությունների պետական թերուսները: Ոչ պատմություն, ոչ դինամիկա, ոչ մշակույթ, ոչ տեղագրություն, այլ միայն գռեհիկ շահասիրություն:

Հուսով եմ, որ տիեզերական բանականությունը ի վերջո ճշմարիտ լուծում կտա արարչության ամենագեղեցիկ սուբյեկտի՝ արցախյան աշխարհի հավերժական գոյությանը: Եվ այս իմաստով ինձ հաճույք է պատճառում Արցախի պետական ոգու և նախագահ Բակո Սահակյանի անընկճելի կամքը՝ գոյության պայքարի մաքառումներում: Թող Պարգև սրբազանի աղոթքով հավերժորեն ղողանջեն Ղազանչեցոց եկեղեցու զանգերը:

12. Յուրաքանչյուր հայի, ինչպես և Ձեզ, խիստ հետաքրքրում է քաղաքական կյանքը: Ես կարծում եմ, որ երբ գրականությունը գնում է դեպի քաղաքականություն, դա գրականության մահն է, երբ քաղաքականությունն է գնում դեպի գրականություն, դա քաղաքականության վերակենդանացումն է: Ինչո՞վ եք բացատրում այս երևույթը:

Ս. Ս. – Ժամանակ առաջ մարդիկ և պետությունները երկերեսանի էին: Դա գոնե փոքր-ինչ ազնիվ վիճակ էր, տարբերակելու լույսերն ու ստվերները, այժմ նրանք դարձել են քառերեսանի, ուրեմն և անճանաչելի, դավադիր, ստոր և կամայական: Աշխարհում կատարվող իրադարձությունների ետևում գործում է երկու գերտերությունների՝ Ռուսաստանի և Ամերիկայի ազդեցության ոլորտների տիրապետական ձգտումները և այդ արանքում փոշիանում է ազգերի ինքնորոշման իրավունքը, քանզի ինքնորոշումը ենթադրում է ազատություն և անկախություն, մինչդեռ քաղաքականության մեջ իրականը բռնությունն է, որ քողարկվում է դիվանագիտական «հումանիզմի» խաղերով: Դիվանագիտական այս հումանիզմի արձագանքին պիտի վերագրել Ծարլ Ազնավուրի նման նորահայտ կոսմոպոլիտիզմը, թե ինքը հայ չէ, ֆրանսիացի է, թե իր մեջ կա նաև թուրքը, ադրբեջանցին, թե իր մեջ հուզականությունը սոսկ վերագրված պիտակ է: Այսպես են ոչնչանում արվեստն ու գրականությունը, «երբ գնում են դեպի քաղաքականություն»: Ինչ վերաբերում է դեպի գրականություն քաղաքականության անցումին, ապա դա պլատոնական երազանք է, ուտոպիա, որ չկրկնվեց ոչ մի տեղ և երբեք: Կա ներպետական, ներազգային քաղաքականություն և միջազգային քաղաքականություն: Երկու դեպքում էլ քաղաքականությունը պետության ստրուկն է և գործում է պետական շահի թելադրանքով: Այստեղ արդեն գրականությունն ու քաղաքականությունը դառնում են անհամատեղելի: Այս իմաստով, հետաքրքիր է իմանալ, ինչ հիմունքով է առաջադրվել հարցը, կա՞, կամ եղե՞լ է արդյոք նման օրինակ, երբ քաղաքականությունը «գնա դեպի գրականություն»: Գոնե ինձ հայտնի չէ նման մի դեպք այս մոլորակի վրա:

13. Կրկին շնորհավորելով Ձեզ՝ հոբելյանի կապակցությամբ, ուզում եմ տալ մի հարց ևս՝ արդյո՞ք դյուրին է 90 տարեկան լինելը, պարոն Սարինյան... Եթե, մանավանդ, նկատի ունենաք ժողովրդական սիրո և հսկայական վաստակի Ձեր այնքան մեծ բեռը...

Ս. Ս. – Այն, ինչ կատարվել է ինձ հետ, փոխել է իմ հայացքը աշխարհի, մարդկության և ամեն ինչի վերաբերյալ: Հեշտ չէ անհաղորդ մնալ քաղաքի անցուդարձին, մայթերի քարերին, շուկաների լիությանը և առհասարակ, գրական, հասարակական միջոցառումներին օտարանալը: Չգիտեմ՝ ինչպես կպատասխանեի հարցին, եթե այլ լիներ իրերի դասավորությունը: Համոզված եմ շեշտը կլիներ ողբերգական, քանի որ կրկնեմ՝ ես բնական հոռետեսություն ունեմ, իմ մեջ մշտապես եղել է անլուծելի մի պայքար, մի հակասություն, որ ավելի շատ անպատճառ է ե-

ղել: Բայց արդյո՞ք անպատճառ... Անհայտը բնության կամքն է, փիլիսոփայի խոսքերով ասած՝ «Չկա ազատություն, ամեն ինչ կատարվում է բնության օրենքով» (Հեգել):

Ակամա հիշեցի Ավ. Իսահակյանի խոսքն իր 80-ամյա հոբելյանին: Գրում եմ բառացի. «Իմաստուն Հնդկաստանում մի գեղեցիկ սովորույթ կար, երբ մարդը դառնում է 60 տարեկան, նրան դնում են կշեռքի նժարին, իսկ մյուս նժարին՝ իր կատարած գործը: Երբ նժարները հավասարակշռվում են, նրան տալիս են երկրորդ կյանքն ապրելու իրավունք»: Համեմատությունը պայմանական է: Գուցեև հավասարակշռվեն իմ եսն ու իմ կատարած գործը, բայց երբեք չէի ցանկանա երկրորդ կյանքի իրավունքն ունենալ: Առանց այդ էլ ես գերազանցել եմ իմ ժամանակը:

90 տարի, 20-րդ դարի 20-ական թվականներից մինչև 21-րդ դարի 10-ական թվականները, գրեթե մի ամբողջ դար, այսինքն հոմերյան շրջանի նահապետական կացությունից մինչև բաց հասարակություն: Այսքանը մեկ դարի, ասել է թե մեկ վայրկյանի ընթացքում: Ինչպիսի երևակայություն է պետք պատկերացնելու, թե ինչ հեղափոխություններ կատարվեցին հասարակության ու մարդկության կյանքում, ինչ գյուտեր, հայտնագործություններ, տիեզերական առեղծվածներ, ընդհուպ մինչև անդեմ կեցության գոյաբանական եզրույթը: Այս ամենը գրանցվել են հիշողության մեջ միանգամայն բնական անցումներով: Սա է 90-ամյակի բովանդակությունը, ընդհանուր առմամբ կարելի է նաև շարունակել, բայց իմ պարագայում՝ երբեք: Անիմաստ է շարունակությունը և հնարավորության պարագայում ես հաճույքով կընդհատեի իմ կենսագրության ժամանակը: Բայց անիմաստ է միջամտել բնության օրենքին և Աստծո տնօրինությանը:

Ծնորհակալություն զրույցի համար:

Հարցազրույցը վարեց Վարդան Հակոբյանը